



№1021
792(47.925)
2-20

1928 №35
25 OCT 2010

ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՀՆԳԱՄՅԱ
ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1921—1926.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИСТОРИКО-ОТЧЕТНОГО
Академии Наук
СССР

792(47.925)
2-20

ՅԵՐԵՎԱՆ, 25 ՀՈՒՆՎԱՐԻ, 1927.

6887

Ca 1834

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. 21Բ
ՏԻՐԱԺ 500

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՀՆԳԱՄՅԱ
ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (1921—1926)

Պետական թատրոնը հիմնվել է 1921 թ. ոգոստոսին, իսկ առաջին սեզոնը բացվել է 1922 թ. հունվարի 25-ին, հինգ ամսվա նախապատրաստական աշխատանքներից հետո:

Դժվարին էլին որոշելով պայմանները այն ժամանակ ընդհանրապես և թատերական գործի համար մասնավորապես: Սուղ էլին նյութական միջոցները, չկար պատրաստի հարմար շենք իր կահավորումով, պակասում էլին գեղարվեստական—ստեղծագործական ուժեր և զրեթե չկային հմուտ տեխնիքական ուժեր:

Սակայն այն շինարարական թափը, վորով համակված էր վողջ յերկիրը նրա խորհրդայնացումից հետո, ունեցավ իր վճռական ազդեցությունը և այս առպարիզում: Պետթատրոնը կարողացավ հենց առաջին տարվանից կանգնել ամուր հիմքերի վրա և հաջողությամբ բավարարել իրեն առաջադրած հասարակական և գեղարվեստական պահանջներին:

Պետթատրոնին հատկացված է նախկին պարլամենտի շենքը, Շահումյան փողոցի վրա: Այդ շենքը գտնվում էր կիսախարխուլ վիճակի մեջ և զրեթե դուրկ էր վս և և գույքից: Թատերական պահանջներին հարմարեցնելու համար շենքը յենթարկված է հիմնական վերանորոգման: Չեռք և բերված բավականաչափ թատերական գույք: Սրանք կահավորված է նոր բազկաթոռներով և տեղավորում է 550 հաճախորդ: Սարքված են ֆոյեներ հաճախորդների համար և բնական ոթյակներ դերասանների համար: Կարգի յե բերված ելեքարասարքը: Կազմակերպված են բնական արհեստանոցներ՝ զեկորներ, զգեստներ, պարիկներ, բուտաֆորիա, և սկզբիցիտ պատրաստելու համար:

Պետական թատրոնը առաջին տարին գտնվում էր պետական մատակարարման մեջ, իսկ յերկրորդ տարվանից անցել է ինքնամատակարարման: Սակայն վորպես կուլտուր-լուսավորական հիմնարկություն Պետ. թատրոնը ինքնին զեֆիցիտային և և իր զե.

Ֆիզիքը ծածկում է պետական նպաստով: Պետթատրոնի նյութական միջոցները կազմվում են՝ սեփական ներկայացումների հատույթից, շենքի և սրահի ոգտագործումից և պետական նպաստից:

Պետթատրոնի պետական կազմված և գեղարվեստական-ստեղծագործական, տեխնիկական և վարչական-տնտեսական պերսոնալից: Առաջին տարին պերսոնալը բաղկացած էր 57 անձից (գեղ.-ստեղծ.—23, տեխնիկ.—13 և վարչական-տնտ.—21), ներկայումս պերսոնալը բաղկացած է 62 անձից (գեղ.-ստեղծ.—38, տեխնիկ.—12, և վարչ.—տնտ.—12): Թատերական պերսոնալը յուրաքանչյուր տարի յնթարկվել է մասնակի փոփոխությունների: Թատրոնի գեկավարությունը ձգտել է ուժեղացնելու գեղարվեստական-ստեղծագործական և տեխնիկական աշխատավորների կազմը, սեղմելով ըստ կարելիության վարչական-տնտեսական կազմը և միշտ կատարել է խիստ ընտրություն, նպատակ ունենալով խլամբել թատրոնի շուրջը մի կողմից կարող և հմուտ և մյուս կողմից շնորհալի և յերիտասարդ ուժեր:

Պետթատրոնի գեղարվեստական և գաղափարախոսական ընդհանուր գեկավարությունը գտնվում է Լուսժողկոմի ձեռքին, իսկ անմիջական գեկավարությունը՝ հանձնված էր գիրեկտորին և ռեժիսյորներին: Լուսժողկոմին կից և նրա նախագահությունը գործում էր Ռեպերտուարային Հանձնաժողով, վորը քննում ու հաստատում էր Պետթատրոնի գործունեության ծրագիրն ու ռեպերտուարը:

Ներկայումս Պետթատրոնի գեկավարությունը ստացել է հետևյալ ստրուկտուրան.— Պետթատրոնի ընդհանուր գեկավարությունն ու վերահսկողությունը պատկանում է Պետթատրոնի Սորհրդին, վորի կազմը նշանակում է Լուսժողկոմը: Սորհրդի գործադիր մարմինն է Պետթատրոնի վարչությունը, վորին պատկանում է Պետթատրոնի գեղարվեստական-ստեղծագործական և վարչական-տնտեսական անմիջական կառավարությունն ու գեկավարությունը: Սորհրդին առնթիւ գոյություն ունեն է Ռեպերտուարային Հանձնաժողով նախագահությամբ Լուսժողկոմի և Գեղարվեստական Կոմիտե:

Պետթատրոնի ռեպերտուարը կազմվել է ինքնուրույն և թարգմանական պիեսներից: Բեմադրվել են՝ թե հին, ղլխավորապես կլասիկ և թե նոր—սոցիալական-հեղափոխական ու կենցաղային պիեսներ: Հին սեպերտուարի պիեսները ոգտագործվել են այն չափով, ինչ չափով հնարավոր և յեղել մեր արդի պահանջ-

ներին և գաղափարախոսությունը հետևող բովանդակություն հաղորդել նրանց: Վորչափ առաջ են յեղել նոր պիեսներ, այնչափ տեղի յե տվել հին սեպերտուարը:

Յուրաքանչյուր նոր բեմադրություն պահանջում է թատրոնի պերսոնալից առնվազն մի ամսվա նախադատարատական աշխատանք, իսկ վերանորոգվող բեմադրությունը մի շաբաթվա աշխատանք: Այսպիսով յուրաքանչյուր սեզոնի ընթացքում հնարավոր է յեղել առաջ 8—10 նոր բեմադրություն և մի ալգքան էլ վերանորոգված բեմադրություն: Բացառություն է կազմում յերկրորդ սեզոնը, յերբ բեմադրությունների քանակը յեղել է գրեթե կրկնակի, վորպիսի հանգամանքը ի հարկի աննպատարեն անդրադարձել է վորակի վրա:

Առաջին սեզոնում արվել են հետևյալ նոր բեմադրությունները.— «Պեպո» — Գ. Սունդուկյանի, «Ավագակներ» — Շիլլերի, «Հիմար» — Ֆոլկլանդի, «Ուրվականներ» — Իրսենի, «Ջրասույց զանգը» — Հաուպտմանի, «Հատակում» — Գորկիի, «Հույսի կործանումը» — Հեյդեմանի, «Հյուրանոցի տիրուհին» — Գոլդոնի, «Կանաչ թուխակ» — Շնիցլերի, «Նորա» — Իրսենի և «Վարդազար» — Մ. Գեորգյանի:

Յերկրորդում՝ «Դատաստան» — Դ. Դեմիրճյանի, «Հեղափոխական հարսանիք» — Լոտարի, «Անտիգոն» — Սոֆոկլեսի, «Բռնի ամուսնություն» — Մոլլիեի, «Դոն-ժուան» — Մոլլիեի, «Սատանայի աշակերտը» — Բեռնարդ Շոուի, «Միմոս» — «14 հուլիսի» — Սուկեննիկովի, «Ոթնիկ» — Շեքսպիրի, «Յերկու տիրոջ ծառան» — Դոլդոնի, «Վենետիկի վաճառականը» — Շեքսպիրի, «Մոննա Վաննա» — Մետերլինկի, «Ուրիել Ակոստա» — Գուցկովի, «Գնչուհի Ջանգա» — Լանգոմերի, «Հին աստվածներ» — Շանթի, «Քին» — Ա. Դյումա-ժ, «Տրիլլի» — Գեյի և «Անհայտ կին» — Բիսոնի:

Յերրորդում՝ «Սալոմե» — Ոսկար Ռալդի, «Հրաշագործություն սուրբ Անտոնիոսի» — Մետերլինկի, «Պատվի համար» — Շիրվանզադեյի, «Յերեկայական հիվանդ» — Մոլլիեի, «Ռեվիզոր» — Դոգոլի, «Մարտ — Ժողովրդի բարեկամը» — Մանուելի, «Ջրհեղի» — Բերգերի, «Կամակոր կնոջ սանձաբարումը» — Շեքսպիրի և «Աղատագրված Դոն-Կիխոտ» — Լուսաշարսկիյի:

Չորրորդում՝ «Կարմիր դիմակ» — Լուսաշարսկիյի, «Սկապենի արարքները» — Մոլլիեի, «Առավոտից մինչ կես գիշեր» — Գ. Կայգերի, «Քաջ Նազար» — Դ. Դեմիրճյանի, «Տարտյուֆ» — Մոլլիեի,



56201-66

«Համլետ»—Շեքսպիրի, «Աննա Բրիտո»—Ոսկելի և «Ակամա հե-
րոս»—Յուր. Յուրյենի.

Հինգերորդում—«Պալիկ 1»—Մերժկովսկիյի, «Վարժապետ
Բուրուսը»—Ա. Ֆայկոյի, «Պարաիզյանի շունը»—Լույկ. դե-Վե-
գայի, «Ֆելյեկոյի դավադրությունը Զենովայում»—Շիլլերի,
«Թուշը»—Լուսաչարսկիյի և «Չար վոդին»—Շիրովանզագելի:

Վերոնիչյակ սեպերուտարից այն բեմագրությունները, վո-
րոնք հաջող են համարվել, վերանորոգվել են հաջորդ սեզոննե-
րում:

Պետ-թատրոնում սեզոնի ընթացքում տրվում և շուրջ շա-
բաթական չորս ներկայացում:

Առաջին սեզոնում տրվել և 85 ներկայացում 23.000 հաճախորդով				
Յերկրորդ » » 94 » 26.000 »				
Յերրորդ » » 76 » 27.000 »				
Չորրորդ » » 82 » 30.700 »				
Հինգերորդ » » 111 » 47.000 »				

Բնդամ. 5 սեզոն. տրվել և 448 ներկայաց. 153.300 հաճախորդ:

Պետ-թատրոնի ներկայացումներին տեղերի գները եծան են
և մատչելի հասարակական լայն խավերին: Որինակի համար՝
հինգերորդ սեզոնում տեղերի գները յեղի են 1 ու. 60 կ. մինչև
30 կ., իսկ առաջ՝ ել ավելի եծան:

Հաճախ և խոշոր չափերով թատրոնը հատկացրել և ձրի տոմ-
սեր արձմուռ-թշունների անդամներին, ուսանողության, աշակերտու-
թյան, կարմիր բանակայիններին, մանկատների սաներին և այլոց:

Պետ-թատրոնի հաճախորդների ճնշող մեծամասնությունը
կազմել են քաղաքի աշխատավորությունը և ուսանողությունը:
Հաճախորդների թիվը տարեց տարի զգալի չափով աճել և: Այս-
պես՝ առաջին և յերկրորդ սեզոնում Պետ-թատրոնը ունեցել և յու-
րաքանչյուր ներկայացման շուրջ 275 հաճախորդ, այսինքն սրա-
հի տարրորդյան 500-ը, յերրորդում՝ շուրջ 362 հաճախորդ—
660-ը, չորրորդում՝ շուրջ 376 հաճախորդ—700-ը և հինգերորդ-
ում՝ շուրջ 423 հաճախորդ—770:

Սեզոնի փակումից հետո ամառվա ամիսներին գրեթե յու-
րաքանչյուր տարի Պետ-թատրոնի խումբը գնացել և գաստրոլնե-
րի՝ Թավրիզ, Զուլֆա, Լենինական, Ղարաբաղի, Ստեփանավան,
Եջմիածին, Թիֆլիզ և Բագու: Այսպիսով հինգ տարվա ընթաց-
քում Պետ-թատրոնի խումբը ավել և գնապահան հայաբնակ վայ-
րերում 70 գաստրոլային ներկայացում:

Բացի սեփական ներկայացումներից Պետ-թատրոնի սրահը
տրամադրվել և նաև կողմնակի հանդեսների և հավաքությունների,
այն և՛ համագումարների, հանդիսավոր նիստերի, համերգների,
յերեկությունների, դասախոսությունների, ոպերային, ոպերետային
և բալետային ներկայացումների, ինչպես նաև թյուրքական և
ուսական ներկայացումների: Նման հանդեսների թիվը յուրա-
քանչյուր տարի յեղի և 100-ից մինչև 120:

Այսպիսով Պետ-թատրոնի շենքը հինգ սեզոնի ընթացքում
ոգտագործվել և առավելագույն չափով և բացի հաշվառի որերից
գրեթե վոչ մի ուր ազատ չի յեղի:

Անցած հնգամյակը Պետ-թատրոնի համար յեղի և կազմա-
կերպման և միաժամանակ հախուսն զարգացման մի շրջան:

Պետ-թատրոնի աշխատավորները գիտակցել են, վոր Պետ-
թատրոնը կոչված և գտնալու բարձրագույն զեղարվեստական հիմ-
նարկություն, ոժտված արդիական արվեստի բարձր տեխնիկա-
յով, լավ վորակի անձնական կազմով և աշխատանքի մեթոդնե-
րով, վորի նպատակն և թատերական արվեստի միջոցով ՀՍԽՀ-ի
բանվորա-գյուղացիական մասսաներին կրթել և գաստրակել հե-
ղափոխական և սոցիալիստական վոգվով:

Պետ-թատրոնը գերազույն չափով լարել և իր ուժերը՝ այդ
նպատակին հասցնող ուղիները գտնելու և վորոշելու համար: Այժմ,
անցած լինելով հնգամյա փորձառության բովից, հաղթահարած
լինելով խոշորագույն դժվարություններ, Պետ-թատրոնը զվարթ և
անվախ թեկուրում և մի նոր շրջան, վատահ լինելով, վոր իրեն
վերջնականապես կաջողվի իր բոլոր ուժերը գնել ի սպաս կա-
մակերպված մասսայական հաճախորդին, վորպիսի աշխատանքին
խոշորագույն չափով պիտի նպաստի Յերևանի ժողովրդական Տան
կառուցվելիք թատերական շենքը:

Ներկայումս Պետ-թատրոնի ղեկավարության ու աշխատա-
կիցների կազմը հետևյալն է՝

Խ Ո Ր Հ Ո Ի Ր Դ Է. Գյուլի-Քյոխյան (նախագահ) Կ. Ղազարյան
Դ. Դեդուհի, Ն. Մակինց, Մ. Գեորգյան, Ա. Բուրջա-
յան, Լ. Քալանթար, Հ. Պետրոսյան, (անձնափոխա-
նորդ), Ս. Մելիքիսթյան (քարուղար), Գեղաշխի ներ-
կայացուցիչ՝ Թ. Զաքարյան (խորհրդ. ձայնով) և Պետ-
թատրոնի տեղիումի ներկայացուցիչ՝ Վ. Վաղարշյան
(խորհրդ. ձայնով)

Վ. Ա. Բ. Զ. Ո. Ի. Թ. Յ. Ո. Ի. Ն. Կ. Ղաղարյան (նախագահ) Մ. Գևորգյան (փոխնախագահ) և Գ. Դղնունի:
Պ. Ե. Բ. Մ. Ո. Ն. Ա. Լ. Դերեկտոր՝ Մ. Գևորգյան

Գեղարվեստակ. - ստեղծագործ. աշխատանքներ՝
Ա. Բուրջալյան—ռեժիսյոր, Լ. Քալանթար—ռեժիսյոր,
Սա. Դավթյան—տեխնիկ. ռեժիսյոր Կ. Հովհաննիսյան
—ռեժիսյորի ոգնական, Խ. Կոստանյան—հուշարար,
Ս. Ալաջալյան—նկարիչ-գեկորատոր, Վ. Զալախյան—
դաշնակահարուհի:

Դերասանուհիներ՝ Հ. Հակոբյան, Արուս Վոսկանյան,
Ո. Գուլազյան, Ա. Սոյանյան, Ս. Փարազաշ,
Լ. Մեղնիկյան, Յե. Ադամյան, Ա. Ղուկասյան, Լե. Քալանթար,
Հ. Զեյթադյան, Վ. Հակոբյան:

Դերասաններ՝ Մ. Մանվելյան (վաստակավոր արտիստ),
Հ. Ստեփանյան (վաստակավոր արտիստ),
Գ. Ավետյան, Մ. Զանյան. Հ. Ներսիսյան, Վ. Վաղարշյան,
Ա. Ավիախյան. Տ. Ալվազյան, Մ. Հարությունյան (Գավրոշ),
Հ. Խաչանյան, Բ. Մուրադյան, Գ. Զանիբեգյան, Ի. Բունյաթյան (Որի), Ս. Քոչարյան,
Դ. Մալյան, Հ. Ավագյան. Գ. Գաբրիելյան, Վ. Թերզիբաշյան,
Գ. Ավագյան, Վ. Դասոյան:

Գեղարվեստական-սեխնիֆական աշխատանքներ՝
Հ. Մանուսաճյան—եկեղորոմոնտյոր, Ա. Հովհաննիսյան—
եկեկ. մոնտյորի ոգնական, Խ. Ղաղարյան—մաշինիստ-
գեկորատոր, Գ. յատարյան—վարսավիրա, Ա. Խաչատրյան—
գերձակ, Կ. Ազիզյան—գերձակուհի. Ա. Տ-Հարությունյան—
բուտաֆ-բեկվիդիտոր, Ս. Դալլաքյան—բուտաֆ-
բեկվիդիտ. ոգնական, Մ. Ղաղարյան—բեմի բանվոր,
Շ. Հարությունյան—հյուան, Ա. Հովհաննիսյան—
հյուան, Ս. Մարտիրոսյան—բեմի պահապան:

Վարչական-սնտեսական աշխատանքներ՝
Ա. Տ-Մկրտչյան—ադմինիստրատոր, Հ. Իսաբեգյան—
հաշվապահ, Գ. Մանայան—պարետ-պահեստապետ, Մ.
Թաթուլյան—տոմսավաճառ, Կ. Մարգարյան—կապել-
գինիեր, Գ. Մկրտչյան—կապելգինիեր, Վ. Մխիթարյան—
կապելգինիեր, Ն. Շուբաշյան—սպասուհի, Ն. Աղատյան—
լվացարարուհի, Հ. Բարսյան—գիշերապահ, Գ. Ասլանյան—
սուրհանդակ:

БИБЛИОТЕКА
ИСТОРИЧЕСКОГО
ОБЩЕСТВА
ИМЕНИ
НАУК
СССР

ՀՀ Ազգային գրադարան



NL0309662

6887